




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1897

ԹԻՒ 9



ԿԻՐԱԿԻ ԱՌՏՈՒԱՆ ՊԱՇՏՅՈՒՆ  
ՇՈՂԵՆԱԻՈՒ ՄԷԶ

Այս պատկերը շատ լաւ և կենդանի կերպով կը ներկայացնէ Ուկրաինայի մին վրայ երթեկող Անգղիական շոգենաւու մը մէջ կիրակի առտուան Աստուածային պաշտամունքի տեսարանը: Պաշտամունքը առ հասարակ տեղի կ'ունենայ շոգենաւուն մեծ սրահին մէջ: Պաշտամունքին առաջնորդողն է, Անգղիական Եկեղեցւոյ սովորութեան համաձայն, նաւապետը կամ շոգենաւուն մէկ ուրիշ պաշտօնակար: Առժամանակեայ ամպիրներ կը ծածկուի Անգղիական դրօշով: Շոգենաւուն պաշտօնատարները և նաւաստիները ներկայ կը գտնուին որչափ կարելի է, ուղևորներն ալ կը հրաւիրուին ներկայ գտնուիլ: Եթէ ուղևորներուն մէջ եկեղեցական գտնուի, կը հրաւիրուի պաշտօնը վա-

րել: Եւ երբեմն Երիցական կամ ուրիշ պաշտօնեայ մը կը հրաւիրուի պաշտօնին համար: Երբեմն ոչ-պաշտօնական պաշտամունքներ ալ տեղի կ'ունենան այնպիսիներու համար որոնք չեն կրնար սովորական պաշտամունքին ներկայ գտնուիլ:

ԳԱՐՈՋ: “ԱԿՆՎԱՆԻՒ ՊԷՍ ՊԱՅՄԱՌ”

Գեռնի՛ն՝ “ԵՐԸ

“Ինչ որ սիրով . . . ան բաները խորհեցէք:” Փիլ. Գ. 8:

Յովհաննէս առաքեալ երկիրքը նկարագրած ատենը պայծառ ակնվանին օրինակ պիտի չբերէր եթէ ակնվանին գեղեցիկ չեպէր:

Աստուած երկիրս գեղեցիկ բաներով լեցուցած է: Անոնք ամէնն ալ մեր չորս կողմն են: Եւ եթէ սորվինք զմայրիկ գեղեցիկ աստղերուն, գեղե-

ցիկ արեւուն և լուսնին լոյսին, գեղեցիկ ծիածանին, գեղեցիկ ամպերուն, գեղեցիկ լեռներուն և բլուրներուն և դաշտերուն, գեղեցիկ ծառերուն և ծաղիկներուն և կանանչեղէններուն, գեղեցիկ թռչուններուն և բոլոր ուրիշ գեղեցիկ բաներուն վրայ, և սիրել զանոնք, պիտի ունենանք ազբիւր մը ուրախութեան և անմեղ հաճոյքի զոր կրնանք վայելել ունէ ատեն: Օրինակի համար, եթէ ուզես միտքդ պահել մարդագետին մը, ե՛րբ որ ուղեւ կրնաս ընել, մտածելով անոր պատկերին վրայ: Նախ խնամով նայէ անոր վրայ, յետոյ գոցէ աչքերդ և մտածէ տեսածիդ վրայ, և անոր պատկերը բունէ ուղեղիդ վրայ: Կրկնէ այս բանը նորէն ու նորէն. և պատկերը մտքիդ մէջ պիտի մնայ մշտաբար: Երևելի ճանապարհորդ մը կուրացաւ ծերութեան ատենը: Բայց կը նստէր իր աթոռին վրայ ժամերով և կը վայելէր մտքին մէջի տեսարանները այն մեծ քաղաքներուն և զարմանալի բաներուն, զորոնք տեսած էր իր ճամբորդութիւններուն միջոցին և տպաւորած էր իր մտքին մէջ:

Բայց պէտք է որ սորվինք տեսնել գեղեցիկ բաներուն ներքին գեղեցիկութիւնը: Գիտէք թէ պատկերներն ի՞նչպէս ծածուկ յատկութիւններ կը կրեն: Երբ առաջին անգամ կը նայիք պատկերի մը վրայ, կը տեսնէք զանիկա իբրև հասարակ պատկեր մը: Յետոյ եթէ աւելի մտադրութեամբ նայիք, կը տեսնէք ուրիշ բաներ ալ, և այնպիսի պարզ կերպով որ կը զարմանաք թէ ի՞նչպէս առաջ չէիք տեսած — չըջագիծը մարդու մը, անասունի մը կամ

լեռան մը: Եթէ Աստուած ձեր սրտին մէջ է, ամէն գեղեցիկ բան զայն պիտի յիշեցնէ ձեզի: Նա պիտի ըլլայ անոնց ներքին գեղեցկութիւնը, անոնց ծածկուած պատկերը:

Մենք Աստուծոյ կատարեալ լուսանկարն ունինք, այն է՝ Յիսուս, Աստուծոյ Որդին, որ անոր բուն պատկերն է, որուն մէջ «կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը մարմնապէս»: Ուրիշ բաներ գեղեցիկ են, բայց Քրիստոս Քրիստոսն է:

Ոչ ոք կրնայ իրապէս սիրել լոյսը և նոյն ժամանակ ատել արևը. և մենք չենք կրնար սիրել գեղեցիկ բաները

հարկը տասներեօթը տարի ետքը, այսինքն 1379ին: Շէնքը երկու ճարտարագետական ոճ կը ներկայացնէ, Նորմանական և վաղեմի Անգլիական: Այս եկեղեցիին ամենէն նշանաւոր բանն են ներսի կողմի փայտի համբաւաւոր քանդակները որ կը ներկայացնեն նորը բանուածքով շատ մը պատկերներ մարդոց, կենդանիներու և ուրիշ զանազան առարկաներու: Այս եկեղեցւոյն շատ մտախիկ կը գտնուի Սրբոյն Յովհաննու Մկրտարանը, Չ. դարու չէնք, Հռոմէական ճարտարագետութեան ոճով շինուած, և Գաղղիոյ ամենէն հին

տղէ մը: Անոնց հայրը երաժշտութեան դասատու էր, և իր զաւակները իր ամենէն աղէկ աշակերտներն էին:

Այնպիսի նեղութեան օրեր եկան որ այս տղաքը հաղու բաւական բան կ'ունենային ուտելու. բայց իրար կը սիրէին, և երջանիկ էին այն պարզ վայելքով որ իրենց բաժին ինկած էր:

Գեղեցիկ օր մը ըսին իրարու, «Երթանք պտոյտ մը ընենք անտառին մէջ: Թուշունները ի՞նչ անուշ կ'երգեն, և գետին վազելու ձայնը երաժշտութեան կը նմանի:»

Գացին: Երբ ծառի մը շուքին տակ նստած էին, տղան մտմտաց և ըսաւ, «Քոյր, աղօթելու ի՞նչ գեղեցիկ տեղ է այս:»


Ֆրէտերիքա հարցուց զարմանքով, «Ի՞նչ բանի համար պիտի աղօթենք:» «Հայրիկին ու մայրիկին համար», ըսաւ եղբայրը. «կը տեսնես թէ ի՞նչ պէս արտում են անոնք: Խեղճ մայրիկը գրեթէ յինդար հիմա, անոր համար որ մեզի համար միշտ հաց չեն ունենար: Աղօթենք Աստուծոյ որ օգնէ մեզի:» «Այո, աղօթենք», ըսաւ Ֆրէտերիքա:

Այսպէս այս երկու անուշիկ տղաքը ծնկան վրայ եկան և աղօթեցին. խնդրեցին երկնաւոր Հայրէն որ օրհնէ իրենց ծնողքները և կարողացնէ զիրենք օգնել անոնց:

«Բայց ի՞նչպէս կրնանք օգնել հայրիկին ու մայրիկին», հարցուց Ֆրէտերիքա: «Չե՞ս գիտեր», ըսաւ տղան, վռլֆկանկ: «Իմ հոգիս երաժշտութիւնով լեցուն է, և քիչ ատենէն նուագարան պիտի զարնեմ մեծ մարդոց առջև, և անոնք ինձի շատ ստակ պիտի տան, ես ալ զանոնք մեր ծնողքներուն պիտի տամ, և մենք աղուոր տան մը մէջ պիտի բնակինք ու երջանիկ պիտի ըլլանք:»

Ասոր վրայ տղան բարձրաձայն ծիծաղ մը լսելով ապշեցաւ մնաց, չէր գիտեր թէ իրենց մօտ մարդ կը դառնուէր: Դառնալով տեսաւ շքեղ պարուն մը որ անտառէն նոր հասած էր հոն: Օտարականը հարցումներ ըրաւ, որոնց պատասխանեց փոքրիկ աղջիկը, ըսելով թէ «վռլֆկանկ կը յուսայ մեծ երաժիշտ մը ըլլալ, կը կարծէ թէ կրնայ ստակ շահիլ և մենք ալ աղքատ պիտի չըլլանք:»

«Կրնայ ընել այդ բանը, երբ սոր



և նոյն ժամանակ գեղեցկութիւն չտեսնել Քրիստոսի մէջ:

Եթէ հոս կը սիրենք գեղեցիկ բաները, երկինքը վայելելու յարմար կ'ըլլանք. վասն զի երկինքը զարմանալի կերպով գեղեցիկ տեղ է. և ամէն բանի ներքին գեղեցկութիւնն է Աստուած և Գառնուկը:

ԳԱՂՂԻՈՑ ՓՈՒԱԹԻԷ ՔԱՂԱՔԻՆ  
«ՆՈՐ ՏԱՍ» ԵԿԵՂԵՑԻՆ

Այս համբաւաւոր վաղեմի եկեղեցիին շինութիւնն սկսաւ 1162ին, մինչ Գաղղիոյ այդ մասը Անգլիոյ իշխանութեան ներքև կը գտնուէր, և ըմպաւ և եկեղեցին նուիրագործուեցաւ երկու

յիշատակարաններէն: Մկրտարանը շտանուիր պատկերին մէջ:

ՎՈՒՑԿԱՆԿ ՄՈՑԱՐԹԻ ԱՂՕԹՔԸ

Շատ տարիներ առաջ Աւստրիոյ Սալցպուրկ քաղաքին մէջ երկու փոքրիկներ, քոյր և եղբայր, կը բնակէին որթատունկերով շրջապատուած տնակի մը մէջ սիրուն գետի մը մօտ: Երկուքն ալ կը սիրէին երաժշտութիւնը. և Ֆրէտերիքա երբ տակաւին վեց տարեկան էր, լաւ դաշնամուր (կլավո) կը զարնէր: Բայց անոր փոքր եղբայրը այնպիսի անուշ եղանակներ կը զարնէր այդ խոնարհ անակին մէջ, որ առաջ երբեք արտադրուած չէին այդչափ պզտիկ

վի բաւական աղէկ նուագարան զարնել” ըսաւ օտարականը :

Յրէտէրիքա պատասխանեց, «Ինք վեց տարեկան է միայն. բայց լաւ նուագարան կը զարնէ և կրնայ եղանակներ շինել :” «Այդ չկրնար ըլլալ :” պատասխանեց օտարականը : «Եկուր տուն, և ես պիտի զարնեմ :” ըսաւ վոլֆկանկ : «Այս իրիկուն կու գամ :” ըսաւ օտարականը :

Տղաքը տուն գացին, և իրենց ծնողաց պատմեցին ինչ որ պատահած էր, որոնք կը թուի թէ շատ հաճոյք զգացին և զարմացան :

Շատ չանցաւ, դուռը ամուր մը զարնուեցաւ. և երբ անեցիները բացին, զարմանքով տեսան որ մարդիկ սակառներով աղուոր եփած տեսակ տեսակ առատ ուտիքներ կը բերէին : Ընտանիքը ճոխ սեղան մը վայելեցին այդ իրիկունը :

Այսպէս Աստուած պատասխանեց տղոց աղօթքին : Շուտ ետքը երբ վոլֆկանկ առանձնեցաւ մը կը զարնէր, զոր ինք յօրինած էր, օտարականը ներս մտաւ և ապշած կեցաւ այն զարմանալի քաղցր եղանակը լսելով : Հայրը ճանչցաւ հիւրը, որ էր Ֆրանչիսկոս Ա. Գերմանիոյ կայսրը :

Շատ ժամանակ չտուեց, կայսրը վիէննա հրաւիրեց ընտանիքը ուր վոլֆկանկ սքանչացուց արքունիքը իր զարմանալի կարողութիւններով :

Վոլֆկանկ տասներկու տարեկան եղած ժամանակը վարպետ կը ճանչցուէր բոլոր երևելի երգահասաններէն : Մոցարթ, ինչպէս ընտիր երաժիշտ նոյնպէս նաև բարի քրիստոնեայ մին էր : Միշտ ունեցաւ Աստուծոյ վրայ այն պարզ վստահութիւնը, զոր սորված էր մանկութեան ատենը : Հօրը զրկած իր մէկ նամակին մէջ կ'ըսէ, «Երբեք զԱստուած չեմ հեռացներ աչքէս : կը խոստովանիմ անոր զօրութիւնը և կը սոսկամ անոր բարկութենէն, բայց նոյն ժամանակը կը սիրեմ զմայիլ անոր բարութեան և իր արարածներուն ցուցած ողորմութեան վրայ : Երբեք չթողուր իր ծառաները, իր կամքին կատարուելով իմ կամքս կը կատարուի :”

Գեռահասակ երաժշտին այս պարզ և աներկևան հաւատքը նշանաւոր էր, և դաս մը կը սորվեցնէ թէ՛ ծերերուն և թէ՛ դեռահասակներուն :

ԼՈՒՍԻՆԸ՝ ՀԵՄԼԹԸՆ ԼԵՌՆԵՆ ՏԵՍՆՈՒԱՏ

Մեր օրերուն մէջ Աստեղադիտական ուսման յաղթանակներէն մին կը տեսնուի «Երկնային Լուսանկարչութիւն» կոչուած արուեստին շնորհիւր : Ամբաւ թուով աստղեր տեսութեան բերուած են մեծ հեռագիտակներու միջոցաւ, և յետոյ լուսանկարուած են : Անոնց վրայով քանի մը տարի առաջ տեղեկութիւն չունէինք : Բայց երկնային լուսանկարչութիւնը աւելին ըրած է. մեր տեղեկութիւնը աւելցուցած է Լուսնին վրայ, Արևուն վրայ, և մեզի ամենէն մօտ գտնուող Հրատ մոլորակին վրայ : Լուսանկարը որ վարը կը դնենք, ֆալիֆորնիոյ Հէմիլթըն լեռան վրայ գտնուող մեծ Լիք Գիտաբանէն առնուածներէն մին է : Պէտք է ըսենք թէ այս լուսանկարը լուսնի մակերեսին մէկ փոքր մասն է միայն :



զուարթութեամբ կը խօսէր հետս : Ես հիմա անոր փոխարէնը պիտի ընեմ :”

Այսպէս վեր ցատկեց խոտին վրայէն որուն վրայ փռուած էր, և զուարթ ըլլալու որոշումով իր երեսը դարձուց դէպ ի սենեակը ուր մայրը նստած՝ ակուայ հանելուն համար հիւանդացած և դեգ մանկիկը հանդարտեցնելու կ'աշխատէր : «Կրնամ տղան առնել և իր կառքին մէջ դնելով պարտցընել քիչ մը, արևոտ գեղեցիկ առաւօտ մըն է :” ըսաւ փափաքով մը : «Շատ ուրախ կ'ըլլամ եթէ ատանկ բան մը ընես :” ըսաւ մայրը : Մանկիկին գլխարկը և վերարկուն բերուեցան, և շուտով պատրաստուեցաւ կառքը դրուելու : «Պիտի նայիմ դանիկա որչափ ատեն որ հանդարտ կենայ :” ըսաւ Սառա, «և դուն պառկէ բազմոցին վրայ և քիչ մը քնացիր : Սոսկալի կերպով յոգնած կ'երևնաս :”

Այս անուշ խօսքերը և անոնց հետ աղջկան համբոյրը շատ աղղեցին մօրը, որ դողդոջուն ձայնով ըսաւ, «Շնորհակալ եմ, սիրելի աղջիկս, այս է՛նչ աղէկ բան ըրիր : Գլուխս սաստիկ կը ցաւի այս առաւօտ :”

Սառա է՛նչ երջանկութիւն կը զգար երբ մանկիկին կառքը ճամբուն վրայ վեր վար կը տանէր կը բերէր : Որոշեց միշտ միտք պահել հօրաքրոջը բարի խօսքերը : «Զուարթ ըլլալու ժամանակը ճիշդ այն է երբ ուրիշներուն սիրաը նեղ կ'ըլլայ :”

ՍԱՌԱ ԻՆՉՊԷՍ ՕԳՆԵՑ ԻՐ ՄՕՐԸ

«Մօրս սիրաը շատ նեղ է :” ըսաւ Սառա երբ խոհանոց մտաւ բերանը ծռմուկելով : Հօրաքրոջը, որ արդու կելու զբաղած էր, վեր նայեցաւ և ըսաւ, «Սուրեմն հիմա ճիշդ ատենն է որ զուարթ ըլլաս և օգնես անոր : Մայրդ բոլոր գիշերը արթուն մնաց խեղճ մանկիկին համար :”

Սառա բան մը չըսաւ : Գլխարկը գլուխը դրաւ և պարտեղ մտաւ : Բայց նոր դադարուար մը ծագած էր մտքին մէջ. «Զուարթ ըլլալու ժամանակը ճիշդ այն է երբ ուրիշներուն սիրաը նեղ կ'ըլլայ :”

«Իրաւ է :” ըսաւ ինքնիրեն, «չատ աղէկ բան է ատիկա : Միտքս կու գայ որ երբ անցեալ տարի հիւանդացայ, այնքան ջլայիւն էի որ եթէ մէկը բան մը ըսէր, սիրտս շատ կը նեղանար. բայց մայրս համբերութեամբ կը տանէր իմ նեղարտութեանս, և շատ

կ'ըլլայ :”

ՄԱՔՈՒՐ ՕՂԸ ՆԵՂԱՐՏՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ

Մաքուր օղը զարմանալի դարման է նեղարտութեան : Հետագայ դէպքը կը հաստատէ զայս :

«Ո՛ր գացիր, Ֆուլիկ :” հարցուց Տիկին Աննա իր աղջկան մինչ սատուն մտաւ վարդագոյն այտերով և անուշիկ ժպտուն աչքերով : «Դաժան բնութիւնս ծախելու :” պատասխանեց աղջիկը ծիծաղելով : «Դաժան բնութիւնդ ծախել : Ի՛նչպէս, ինչո՞ւ, չեմ հասկնար :” ըսաւ Տիկին Աննա քիչ մը զարմացած :

«Սիրեքն :” ըսաւ Ֆուլիկ, «կորստնուցի դաժան բնութիւնս և աղէկ բնութիւն մը գտայ : Գիտե՞ք, մայր, բոլոր օրը տան մէջ կը կենայի. և սիրտս նեղանալուն համար հանգիստ չէի թողուր Ո՞րոնք : Ես չուզեցի պը-

